

ԱՐՄԻՆԵ ՉՈՒՄՆՅԱՆ

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ, ՀՀ փաստաբանների պալատի անդամ



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՄԵԴԻԱՑԻԱՅԻ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ (ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Հոդվածը վերաբերում է քաղաքացիաիրավական վեճերի քննության այլընտրանքային եղանակներին: Մասնավորապես կատարվել է համեմատական վերլուծություն միջազգային առևտրային արբիտրաժի և մեդիացիայի հասկացության ու սկզբունքների վերաբերյալ:

Ներկայացվել է ինչպես արբիտրաժի, այնպես էլ մեդիացիայի գործընթացներն իրենց համապատասխան ընթացակարգերով: Հոդվածում համեմատական վերլուծություն է կատարվել նաև դրանց նմանության և տարբերության վերաբերյալ, և իհարկե, ներկայացվել է արբիտրաժի և մեդիացիայի կողմից կայացված որոշումների պարտադիր կամ ոչ պարտադիր լինելու հանգամանքները:

Հիմնարար բառեր- համաշխարհային գլոբալիզացիա, առևտրատնտեսական հարաբերություններ, պետական կառուցակարգեր, միջազգային պարտավորություններ, արբիտրաժային օրենսդրություն, միջազգային առևտրային արբիտրաժ, ազգային դատարան:

Արդի ժամանակաշրջանում և ողջ աշխարհում նկատվող սոցիալ-տնտեսական փոփոխությունները, համաշխարհային գլոբալիզացիան, միասնացման (ինտեգրացիոն) գործընթացները ոչ միայն պայմանավորեցին առևտրատնտեսական հարաբերություններից ծագող վեճերի լուծման բնագավառում տարբեր պետությունների համագործակցությունը, այլև նման վեճերի լուծման համար անհրաժեշտ համընդհանուր կանոնների մշակումը, և նույնիսկ՝ այս ոլորտում տարբեր իրավական հասկարգերի մերձեցումը:

Աշխարհի քաղաքակիրթ պետությունները մշակել են զարգացած և առաջադեմ արբիտրաժային օրենսդրություն, որի ուսումնասիրությունը կենսական է նաև հայրենական իրավագիտության համար: ԱՆհրաժեշտ է հիշատակել, որ ԱՊՀ երկրներից մի քանիսը (ՌԴ, Ուկրաինա, Բելոռուս և այլն)¹ արդեն ընդունել են արբիտրաժը կարգավորող օրենքներ, որոնց համար հիմք է ծառայել ՄԱԿՄԻՀ (Միացյալ ազգերի կազմակերպության միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողով) 1985 թ. հունիսի 25-ի «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» նմուշային օրենքը:

Հարկ է նշել, որ միջազգային առևտրային արբիտրաժի կայացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը թելադրված է նաև Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններով, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության և Եվրահամայնքի միջև 1996 թ. ապրիլի 22-ին կնքված և 1999 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագրով, որի 86-րդ հոդվածի համաձայն՝ կողմերը պետք է խրախուսեն արբիտրաժային կարգով առևտրային և համագործակցային գործարքներից բխող վեճերի կարգավորումը, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի ու 1958 թ. Նյու Յորքում ստորագրված «Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման մասին» համաձայնագրի անդամ հանդիսացող երկրների արբիտրաժային կանոնակարգերի կիրառումը: Հետևաբար, սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի, առևտրային արբիտրաժների էության, իրավական բնութագրի, գործունեության սկզբունքների բացահայտումը, պատմական զարգացման տարբեր ժամանակահատվածում վերջինիս հիմնական ինստիտուտների ուսումնասիրությունը դարձել են այս ամենի անհրաժեշտ նախապայման:

նի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններով, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության և Եվրահամայնքի միջև 1996 թ. ապրիլի 22-ին կնքված և 1999 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագրով, որի 86-րդ հոդվածի համաձայն՝ կողմերը պետք է խրախուսեն արբիտրաժային կարգով առևտրային և համագործակցային գործարքներից բխող վեճերի կարգավորումը, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի ու 1958 թ. Նյու Յորքում ստորագրված «Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման մասին» համաձայնագրի անդամ հանդիսացող երկրների արբիտրաժային կանոնակարգերի կիրառումը: Հետևաբար, սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի, առևտրային արբիտրաժների էության, իրավական բնութագրի, գործունեության սկզբունքների բացահայտումը, պատմական զարգացման տարբեր ժամանակահատվածում վերջինիս հիմնական ինստիտուտների ուսումնասիրությունը դարձել են այս ամենի անհրաժեշտ նախապայման:

Միջազգային առևտրային արբիտրաժն իր իրավական բնույթով լուրջ քննարկման առարկա է,

www.journal.lawinstitute.am

որը գտնվում է հետազոտողների ուշադրության կենտրոնում²: Մեր ուսումնասիրության սահմաններում հիմնական շեշտը կոնցենք միջազգային առևտրային արբիտրաժի կարգավորման որոշ հիմնահարցերի վրա:

Փաստենք, որ արբիտրաժը համաշխարհային իրավաբանական պրակտիկայում ունի լայն կիրառություն, խորը ակունքներ և վաղ պատմություն: Կարելի է ասել, որ դատարանների պետական համակարգի բացակայության պայմաններում այն հանդիսացել է արդարադատության իրականացման առաջնային կառուցակարգ (մեխանիզմ), որի միջոցով իրականացվում էր հասարակության առանձին անդամների միջև ծագած վեճերի քաղաքակիրթ լուծումը (սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը): Պատմական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արբիտրաժն առաջացել է ավելի վաղ, քան պետական դատարանները³: Այդ մասին են վկայում նաև Ռ. Չոմի և Ռ. Իերինգի աշխատությունները, ըստ որոնց պնդում են, որ Հին աշխարհում քաղաքացիական դատավարությունն առաջացել է արբիտրաժային վարույթից (միջնորդ վարույթից (arbitration))⁴:

Այսպիսով, արբիտրաժային կարգով վեճերի լուծումը մարդկությանը հայտնի է եղել դեռևս պետականության բացակայության պայմաններում: Ընդ որում, պետության և դատարանների պետական կառուցակարգերի ստեղծումը սովորել էր արբիտրաժի վրա: Այն լայնորեն կիրառվում էր նաև տարբեր պետությունների միջև առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման համար: Իսկ միջպետական առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը լուրջ խթան հանդիսացավ միջազգային առևտրային արբիտրաժի առաջընթացի և հեղինակության բարձրացման համար:

Միջազգային առևտրային արբիտրաժի իրավական բնույթի վերլուծությունը կարող է կատարվել հետևյալ հիմնական փուլերով՝

- ա) վեճերի այլընտրանքային կարգավորման առարկայի սահմանում,
- բ) արբիտրաժի իրավական տեսության ուսումնասիրություն, ընդ որում՝ գլխավոր ուշադրությունը հատկացնելով միջազգային առևտրային արբիտրաժի հարցերի կարգավորման նոր միտումների բացահայտմանը:

Պետք է ուշադրություն դարձնել այն իրողու-

թյան վրա, որ ՀՀ պայմանագրային հասկացությունը հանդիսանում է միջազգային առևտրային արբիտրաժի կարևորագույն տարրերից մեկը, որովհետև ցանկացած իրավահարաբերության առաջացման և գործունեության համար պայմանագրային մասում սահմանված են միջազգային առևտրային արբիտրաժի հիմնարար սկզբունքները:

Միջազգային առևտրային արբիտրաժը հանդիսանում է վեճերի կարգավորման մեթոդ⁵ (ADR), այսինքն՝ արբիտրաժային ընթացակարգը տեղի է ունենում անկախ, անկողմնակալ արբիտրի միջոցով և դասվում է վեճերի այլընտրանքային կարգավորման եղանակների շարքին: Վեճերի այլընտրանքային կարգավորում ասելով՝ նկատի ունենք, որ վեճը չի քննվում ազգային դատարանների կողմից, այսինքն՝ կողմերը պայմանագրով բացառում են դատական իշխանության իրավական միջամտությունը, չնայած բացառված չէ նաև այն հանգամանքը, որ անհրաժեշտության դեպքում վեճերի այլընտրանքային կարգավորումը կարող է տեղի ունենալ դատական ատյաններում (կողմերն այլընտրանքային մեթոդի դիմելու դեպքում, չստանալով ցանկալի արդյունք, իրավասու են դիմելու տեղական ատյանների՝ դատարանների միջամտությանը):

Գոյություն ունեն առևտրային վեճերի առաջացման մի քանի պատճառներ: Առաջին հերթին դա պայմանավորված է դատական իշխանության ոչ լիարժեք, չկատարելագործված լինելու հանգամանքով՝ ներառյալ տեղական դատական ատյաններում վեճի կարգավորման ծախսատար և ժամանակատար բնույթը կամ հաշվի առնելով դատարանների ընդհանուր ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև կողմերի տրամադրվածությունը՝ չդիմելու այս կամ այն (ազգային) դատական ատյանին:

Նկատի ունենալով կողմերի կատարած նյութական և ժամանակային ծախսերը՝ առաջացած վեճերը նրանց համաձայնությամբ կարող են լուծվել ոչ միայն այլընտրանքային ճանապարհով, այլ նաև ավանդական կարգով դատական համապատասխան ատյաններում: Մեկ այլ դեպքում դատարան դիմելու պատճառ կարող է հանդիսանալ այսպես կոչված կողմերի միջև գործընկերական հարաբերությունները:

Ինչպես ցույց է տալիս միջազգային պրակտիկան, կոնֆլիկտները բազմաթիվ դեպքերում առաջանում են միջազգային պայմանագրերի պայման-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ների ոչ լիարժեք կատարման կամ պարզապես չկատարման հետևանքով: Այդպիսի իրավիճակները կարող են շատ բազմաբնույթ լինել, օրինակ՝ սուբյեկտիվ, երբ գործընկերներն ունենում են ուղղակի դիտավորություն կամ օբյեկտիվ, որևէ արտաքին, կողմերի կամքից անկախ հանգամանքների պատճառով, որոնք ազդում են պայմանագրի դրույթների խախտման կամ ընդհանրապես պայմանների չկատարման վրա:

Կողմը, որի իրավունքները խախտվել են, ամփջապես դիմելով ազգային դատարան, իր գործընկերոջը (կամ որ նույնն է՝ հակառակ կողմին) հասկացնում է, որ չի ցանկանում հանդուրժել վեճի խաղաղ կարգավորումը, տրամադրված չէ դրա պատճառների վերհանման խնդիրներով և այդպիսով նրա նկատմամբ արտահայտում է անվստահություն: Վեճերի այլընտրանքային կարգավորման եղանակները թույլ են տալիս խուսափել վերը նշված հակասությունների խիստ սրումից և դրսևորել գործընկերային հարաբերություններ, այսինքն՝ վեճը հարթել բարիդրացիական և ընկերական մեթոդներով: Եթե միջազգային առևտրային արբիտրաժն ամբողջությամբ չի համապատասխանում կողմերի նպատակներին, ապա նրանք դիմում են որևէ ընկերության (կամ իրենք են այն կազմում), որի հիման վրա արբիտրը կայացնում է կողմերի համար պարտադիր և իրավաբանական ուժ ունեցող որոշում: Այնուամենայնիվ, միջազգային առևտրային արբիտրաժը ոչ պետական համակարգ է, որը դուրս չի գալիս միջազգային գործընկերական հարաբերությունների շրջանակներից և նպատակ ունի գործընկերական հարաբերությունների պահպանում, այն է՝ առաջարկում է հարցի լուծման փոխզիջումային տարբերակ:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ ներկայումս աշխարհում նկատվում է վեճերի լուծման այլընտրանքային եղանակների նկատմամբ մեծ հետաքրքրություն (ADR)⁶: Այն լայն տարածում է գտել հատկապես ԱՄՆ-ում, ընդ որում, ամերիկյան ընկերություններն աշխատում են վեճերի այլընտրանքային կարգավորման եղանակները տարածել նաև Միացյալ Նահանգներից դուրս: Այդ գործընթացում մեծ դերակատարություն ունի Ամերիկյան իրավաբանների ասոցիացիան (ABA), որի հետ համագործակցում են բազմաթիվ միջազգային կազմակերպություններ: Արդյունքում ընդունվել են հաշտարարական գործընթացների կարգավորումը

նախատեսող հատուկ կանոններ, մեդիացիայի և, այսպես ասած, մինի գործընթացների⁷ անցկացման ընթացակարգեր: Այսպես, մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունում մեդիացիայի կանոնները գործում են 1996թ-ից, իսկ Միջազգային առևտրային պալատում 1988թ-ից գործում է Հաշտեցման խորհրդարան: Բավական է հիշատակել, որ 1986թ-ին Յուրիխի առևտրային պալատն ընդունել է հաշտարարական կարգավորման մինի պրոցեսների համապատասխան կանոններ: Այսպիսի կարգավորող դրույթներ սահմանված են նաև մի շարք հայտնի ազգային առևտրային արբիտրաժային գործող կենտրոններում, ինչպիսին, օրինակ, առկա է Ստոկհոլմում:

Ներկայումս վեճերի այլընտրանքային կարգավորումը տարածում է գտել ինչպես Ռուսաստանում, Բելոռուսիայում, Ուկրաինայում, Վրաստանի Հանրապետությունում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում, ստեղծվել և գործում են մի քանի մեդիացիոն կենտրոններ, որոնք կոչվում են «կոնֆլիկտների կարգավորման կենտրոններ»: Ռուսաստանի Դաշնությունում, օրինակ, դրանցից ամենախոշորը գործում է Սանկտ Պետերբուրգում:

Գիտական գրականության մեջ վեճերի այլընտրանքային կարգավորման եղանակների թվին, բացի միջազգային առևտրային արբիտրաժից, դասվում են նաև բանակցությունները, մեդիացիան (միջնորդությունը), կոնսիլիացիան (հաշտեցնողական գործընթացները) և մինի գործընթացները⁸:

Այժմ փորձենք համեմատել այլընտրանքային վեճերի կարգավորման վերը նշված մեթոդները՝ հաշվի առնելով նաև միջազգային առևտրային արբիտրաժի գործունեությունը:

«Մեդիացիա» նշանակում է վեճի կարգավորում, կողմերի միջև փոխզիջման ձեռքբերում երրորդ չեզոք ու անկողմնակալ կողմի՝ մեդիատորի կամ միջնորդի մասնակցությամբ: Երբեմն «մեդիացիա» նշանակում է կողմերի՝ երրորդ անձի ներկայությամբ կամ մասնակցությամբ բանակցությունների վարում, սակայն հաշվի առնելով մեր դիրքորոշումը բանակցությունների վերաբերյալ՝ միջնորդությունը գերադասում ենք երրորդ անձի ներկայությամբ ուղղակի բանակցություններից:

Մեդիացիան, ինչպես և արբիտրաժը, վերջին ժամանակներում ի հայտ եկած նոր դրսևորում չէ: Այն կիրառվել է հարյուրավոր տարիներ առաջ Չինաստանում և ասիական-խաղաղ օվկիանոսյան

www.journal.lawinstitute.am

տարածաշրջանի այլ երկրներում: Մինչև այժմ մեղիացիան ամենատարածված մեթոդներից է Չինաստանում և Ճապոնիայում, որտեղ դատական գործընթացները համարվում են առավել անցանկալի, քանի որ դատարանում վեճերը դուրս են հանվում ներքին իրավահարաբերությունների շրջանակներից և խախտում են, այսպես կոչված, կողմերի միջև նորմալ հարաբերությունների հաստատումը:

Մինչև վերջին ժամանակներս մեղիացիան լայնորեն կիրառվել է միջազգային հանրային իրավունքի բնագավառում՝ պետությունների միջև հարաբերությունների կարգավորման նպատակով: Վեճերի կարգավորման նպատակներով վերջին տասնամյակում մեղիացիան կիրառվում է նաև միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտում:

Մեղիացիայի գործընթացը պարզաբանելու նպատակով այն համեմատենք միջազգային առևտրային արբիտրաժում գործի քննության պրոցեդուրայի հետ: Ընդհանուր առմամբ մեղիացիան առաջին անգամ կիրառվել է մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) կողմից, որտեղ և 1994թ-ին ստեղծվել է Արբիտրաժի և մեղիացիայի կենտրոնը⁹:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության մեղիացիայի կանոնադրությունը նախատեսում է, որ այդ գործընթացն իրագործվում է միայն կողմերի համաձայնությամբ, և այն կարող է սահմանվել կողմերի միջև գործընկերական կապերի կարգավորման հիմնական պայմանագրում կամ վեճի ծագումից հետո որևէ առանձին փաստաթղթում և ենթակա է կողմերի ստորագրմանը: Այստեղ մեղիացիան և արբիտրաժը միմյանց նման են, քանի որ միջազգային առևտրային արբիտրաժի համար ևս պահանջվում է կողմերի համաձայնությունը (արբիտրաժային համաձայնություն):

Վեճի ծագման հետևանքով կողմերից որևէ մեկը մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Արբիտրաժի և մեղիացիայի կենտրոն է ուղարկում մեղիացիայի իրականացման խնդրանք-դիմում, որը պարունակում է կողմերի ներկայացուցիչների տվյալները և հասցեները, ինչպես նաև մեղիացիա իրականացնելու համար կողմերի միջև համաձայնություն և վեճի ծագման վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն: Միաժա-

մանակ հակառակ կողմին է ուղարկվում մեղիացիա իրականացնելու դիմումի պատճենը:

Դիմումն ստանալուց հետո մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության արբիտրաժի և մեղիացիայի կենտրոնը մեղիատորի նշանակման համար կապ է հաստատում կողմերի միջև: Նրանց պահանջները մեղիատորի ընտրության համար պարզելուց հետո Կենտրոնն առաջարկում է մեղիատորի նշանակման համար մի քանի թեկնածուներ: Կողմերը պետք է համաձայնություն ձեռք բերեն մեղիատորի ընտրության հարցում, որը հետագայում հաստատվում է Արբիտրաժի և մեղիացիայի կենտրոնի կողմից: Այս փուլում Կենտրոնը կողմերի հետ քննարկում է նաև մեղիացիայի անցկացման տեխնիկական հարցերը (վայրը, եթե այն ձեռք չի բերվել կողմերի միջև համաձայնությամբ, անհրաժեշտ ծառայությունները և այլն): Բացի այդ, Կենտրոնը մեղիատորի և կողմերի համաձայնությամբ սահմանում է մեղիատորի հոնարարի չափը:

Ընթացակարգային հարցերը արբիտրաժի և մեղիացիայի նախնական փուլում կախված են կոնկրետ Կենտրոնի կանոնակարգից և կարող են ինչպես համընկնել, այնպես էլ տարբերվել:

Հարկ է նշել, որ վեճի կարգավորման մեջ մեղիատորի դերն առաջնահերթ կարևորություն ունի: Վեճի առարկայի նկատմամբ նրա իրավասության, դիպլոմատիկ ունակությունների և երկխոսություն անցկացնելու հմտություններից է կախված գործընթացի ելքը: Այսպիսով, մեղիատորը չի կարող գործել որպես դատավոր կամ արբիտր, կողմերին տալ իրավաբանական խորհրդատվություն կամ որոշել, թե ով է ճիշտ և ով՝ սխալ: Գործընթացի ամբողջ ընթացքում մեղիատորը պարտավոր է մնալ չեզոք և կողմերից անկախ: Պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ մեղիատորը (միջնորդը), ի տարբերություն արբիտրի, չի կարող հետազոտել վեճի ծագման պատճառները, քանի որ նրա առջև դրված չէ որոշման ընդունման պարտավորությունը կամ խնդիրը: Նրա գործունեության նպատակն է կողմերից յուրաքանչյուրից ստանալ վեճի վերաբերյալ փաստարկներ և հնարավորին չափ կարծիքներ վեճի կարգավորման եղանակների վերաբերյալ, հակառակ կողմին ծանոթացնել այդ տեղեկատվությանը (եթե միջնորդը կարող է առաջարկել կոնֆլիկտի լուծման իր տարբերակը, սպա ծանոթացնել կողմերին այդ տարբերակին) և աստիճանաբար

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ուղղորդել նրանց դեպի վեճի լուծումը՝ ամեն անգամ կողմերին հիշեցնելով իրենց իսկ կողմից քննարկված ավելի օբյեկտիվ, օպտիմալ տարբերակներ:

Կենտրոնի կողմից մեղիատորի հաստատումից հետո վերջինս կողմերի հետ համաձայնեցնում է (սովորաբար հեռախոսով) նախատեսված լուծումների, հանդիպումների, քննարկումների ժամկետներ: Բացի այդ, նա կողմերին տեղեկացնում է, թե ինչպիսի փաստաթղթեր և ինչ ժամկետներում պետք է ներկայացվեն:

Առաջին լսման ժամանակ մեղիատորը և կողմերը սահմանում են նիստերի անցկացման կանոնները, ինչպես օրինակ, արդյո՞ք բոլոր հանդիպումները տեղի են ունենալու երկու կողմերի մասնակցությամբ, թե՞ մեղիատորն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում հանդիպել կողմերից յուրաքանչյուրին առանձին-առանձին: Բացի այդ, մեղիատորը հավաստիանում է, որ կողմերը ծանոթ են մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության արբիտրաժի և մեղիացիայի կենտրոնի կանոններին:

Միաժամանակ նա կարող է կողմերի հետ քննարկել նաև լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման և փորձագետների ներգրավման անհրաժեշտությունը:

Այսպիսով, մեղիացիան տեղի է ունենում կողմերի միջև ձեռք բերված համաձայնությամբ սահմանված կարգով: Համաձայնության բացակայության պայմաններում մեղիատորն ինքն է սահմանում մեղիացիայի անցկացման կանոնները՝ համաձայն մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության արբիտրաժի և մեղիացիայի կենտրոնի ընթացակարգերի: Նույն կերպով է լուծվում նաև հարցն արբիտրաժի ընտրության դեպքում: Կողմերն իրենք են սահմանում, թե որտեղ պետք է տեղի ունենան նիստերը: Տարբերությունը կայանում է միայն նրանում, որ արբիտրները կողմերի հետ չեն հանդիպում առանձին-առանձին: Այս հարցում արբիտրաժն ավելի քան հիշեցնում է քաղաքացիական դատավարության ընթացակարգը, այն դեպքում, երբ մեղիացիան պարունակում է բանակցություններ վարելու տարրեր:

Կոնկրետ իրավիճակից և կողմերի դիրքորոշումից կախված՝ վեճը կարող է լուծվել առաջին իսկ լսման, կամ ավելի երկար ժամանակ, որի համար կարող են պահանջվել որոշակի օրեր, կամ նույնիսկ շաբաթներ պահանջող նիստեր: Ամեն դեպքում այդ հանդիպումների ժամանակ ձեռք է բերվում վեճի առարկայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություն, բացահայտվում են կողմերի դիրքորոշումները, ինչպես նաև փնտրվում են խնդիրների լուծման հնարավոր եղանակներ, որոնք կգոհացնեն երկու կողմերին: Գուցե սա ամենաէական (նշանակալից) տարբերություններից է համարվում մեղիացիան արբիտրաժից տարբերակելու համար:

Վերոգրյալի հիման վրա կարելի է հանգել եզրակացության, որ մեղիատորը հավաքում է տեղեկատվություն, որպեսզի այն հետագայում մշակելուց հետո ներկայացնի կողմերին՝ նրանց կողմից վերջնական որոշում ընդունելու համար, իսկ արբիտրը որոշում կայացնելու համար ստանում է համապատասխան տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր:

Եթե հաջողվում է կայացնել փոխադարձ համաձայնեցմամբ որոշում, ապա այն ձևակերպվում է գրավոր ձևով, ստորագրվում է կողմերի և մեղիատորի միջև: Դա եզակի փաստաթուղթ է, որը կայացվում է մեղիացիայի արդյունքում: Լսումների արձանագրություններ չեն կատարվում, իսկ գրառումները, որոնք կատարվում են մեղիատորի և կողմերի միջև հանդիպումների ընթացքում, մեղիացիայի ավարտից հետո ենթակա են ոչնչացման: Կողմերից մեղիատորին տրամադրված գաղտնի տեղեկությունը ոչ մի դեպքում և ոչ մի հանգամանքում չի կարող հայտնվել այլ անձանց առանց այդ կողմի գրավոր համաձայնության: Մեղիացիայի ընթացքում կողմերի և մեղիատորի կողմից ստացված տեղեկատվությունը չի կարող օգտագործվել հետագայում, եթե վեճի կարգավորման գործընթացը փոխանցվում է դատարանին կամ արբիտրաժին: Ինչ վերաբերում է տեղեկատվության գաղտնիությանը, ապա արբիտրաժը նույնպես պահպանում է այն: Առանց կողմերի համաձայնության ոչինչ չի կարող հրապարակվել, փոխանցվել որևէ մեկին և այլն: Արբիտրաժում այդպիսի փաստաթղթերի գոյությունը (նշումներ, գրառումներ, և այլն) ոչ միայն նախատեսված են նորմատիվ իրավական կարգով, այլ նաև պարտադիր է այն դեպքերի համար, երբ կողմերից մեկը նպատակ ունի վիճարկել արբիտրաժային որոշումն Ազգային դատարանում:

Պրակտիկան ցույց է տալիս, որ մեղիացիան ոչ միշտ է ավարտվում փոխադարձ համաձայնությամբ: Մեղիատորը կարող է հանգել եզրակացության, որ առաջարկված մեղիացիան չի կարող բե-

րում այդ հանդիպումների ժամանակ ձեռք է բերվում վեճի առարկայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություն, բացահայտվում են կողմերի դիրքորոշումները, ինչպես նաև փնտրվում են խնդիրների լուծման հնարավոր եղանակներ, որոնք կգոհացնեն երկու կողմերին: Գուցե սա ամենաէական (նշանակալից) տարբերություններից է համարվում մեղիացիան արբիտրաժից տարբերակելու համար:

Վերոգրյալի հիման վրա կարելի է հանգել եզրակացության, որ մեղիատորը հավաքում է տեղեկատվություն, որպեսզի այն հետագայում մշակելուց հետո ներկայացնի կողմերին՝ նրանց կողմից վերջնական որոշում ընդունելու համար, իսկ արբիտրը որոշում կայացնելու համար ստանում է համապատասխան տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր:

Եթե հաջողվում է կայացնել փոխադարձ համաձայնեցմամբ որոշում, ապա այն ձևակերպվում է գրավոր ձևով, ստորագրվում է կողմերի և մեղիատորի միջև: Դա եզակի փաստաթուղթ է, որը կայացվում է մեղիացիայի արդյունքում: Լսումների արձանագրություններ չեն կատարվում, իսկ գրառումները, որոնք կատարվում են մեղիատորի և կողմերի միջև հանդիպումների ընթացքում, մեղիացիայի ավարտից հետո ենթակա են ոչնչացման: Կողմերից մեղիատորին տրամադրված գաղտնի տեղեկությունը ոչ մի դեպքում և ոչ մի հանգամանքում չի կարող հայտնվել այլ անձանց առանց այդ կողմի գրավոր համաձայնության: Մեղիացիայի ընթացքում կողմերի և մեղիատորի կողմից ստացված տեղեկատվությունը չի կարող օգտագործվել հետագայում, եթե վեճի կարգավորման գործընթացը փոխանցվում է դատարանին կամ արբիտրաժին: Ինչ վերաբերում է տեղեկատվության գաղտնիությանը, ապա արբիտրաժը նույնպես պահպանում է այն: Առանց կողմերի համաձայնության ոչինչ չի կարող հրապարակվել, փոխանցվել որևէ մեկին և այլն: Արբիտրաժում այդպիսի փաստաթղթերի գոյությունը (նշումներ, գրառումներ, և այլն) ոչ միայն նախատեսված են նորմատիվ իրավական կարգով, այլ նաև պարտադիր է այն դեպքերի համար, երբ կողմերից մեկը նպատակ ունի վիճարկել արբիտրաժային որոշումն Ազգային դատարանում:

Պրակտիկան ցույց է տալիս, որ մեղիացիան ոչ միշտ է ավարտվում փոխադարձ համաձայնությամբ: Մեղիատորը կարող է հանգել եզրակացության, որ առաջարկված մեղիացիան չի կարող բե-

www.journal.lawinstitute.am

րել կողմերի միջև համաձայնություն: Այդ դեպքում նա որոշում է ընդունում մեղիացիայի դադարեցման վերաբերյալ: Բացի այդ, կողմերից մեկն իրավունք ունի յուրաքանչյուր առաջին նիստից հետո և նախքան համաձայնության ձեռքբերումը, ցանկացած պահի հայտարարել մեղիացիայի դադարեցման վերաբերյալ: Այս հարցում արբիտրաժն ավելի քիչ ազատություն է տրամադրում ինչպես արբիտրին, այնպես էլ կողմերին: Վեճի կարգավորմանն ուղղված հարցերի քննարկումից արբիտրը կարող է հրաժարվել միայն նախնական փուլում, երբ լուծման համար ներկայացվում են համապատասխան փաստաթղթեր կամ տվյալ վեճի լուծումը դուրս է մեղիատորի իրավագործությունների շրջանակներից: Բացի այդ, որոշման բացակայությունը կարող է պայմանավորվել այլ հանգամանքներով, ինչպիսիք են կողմերի միջև համաձայնության ձեռքբերումը, հայցվորի կողմից հայցից հրաժարումը և այլն: Նշված հանգամանքները և դրանց իրավական հետևանքները նշանակալից տարբերություններ են առաջացնում արբիտրաժի և մեղիացիայի միջև:

Այսպիսով, միջազգային առևտրային արբիտրաժի և մեղիացիայի սկզբունքային տարբերությունները կայանում են երկու փոխկապակցված իրավիճակներում: Առաջինը երրորդ անձի դերի և վարքագծի տարբերության առկայությունն է (արբիտրի և մեղիատորի դերերի վերաբերյալ): Արբիտրը որոշումն ընդունում է ինքն անձամբ, իսկ միջնորդը բանակցությունների միջոցով կողմերին բերում է իրենց համար իսկ ընդունելի պայմաններով

համաձայնության ձեռքբերման: Երկրորդ, երկու մեթոդներն էլ առանձնանում են արդյունքում ընդունված փաստաթղթով՝ արբիտրաժում, որոշման ընդունում, որը պարտադիր է կողմերի համար, մեղիացիա, որը կարող է ավարտվել նաև առանց որևէ արդյունքի (եթե կողմերը չեն կարողանում հասնել համաձայնության), կամ եթե կողմերը ընդունում են որոշում իրենց իսկ կողմից, որը նրանց համար չի կրում պարտադիր բնույթ, և նրանք դա պետք է կատարեն իրենց կամքով:

Ներկայացնենք նաև մեկ այլ տարբերություն, որը հաջորդում է (հետևում է) երկրորդին: Այս երկու մեթոդների տարբերությունը կայանում է նաև դրանց կայացման իրավական հետևանքներում: Արբիտրաժի կողմից կայացված որոշումն ունի դատարանների կողմից պարտադիր ճանաչման ուժ, այդ թվում՝ նաև օտարերկրյա դատարանների, իսկ մեղիացիայի ընթացքում կայացված որոշումն այդպիսի ուժ չունի:

Վեճերի լուծման այս երկու մեթոդներից մեղիացիայի հիմնական առավելությունն այն է, որ կողմերն ակտիվորեն մասնակցում են մեղիացիային և ամբողջովին կառավարում են որոշում ընդունելու գործընթացը, ինչն էլ առաջացնում է կողմերի գոհունակությունը և նպաստում է նրանց միջև երկարաժամկետ հարաբերությունների հաստատմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, Երևան, 2011թ.:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, Երևան, 2013թ.:

¹ Առևտրային արբիտրաժների գործունեությունը կարգավորող օրենքներ. ընդունվել են՝ Ռուսաստանի Դաշնությունում 07.07.1993, Բելոռուսում՝ 09.07.1999, Ուկրաինայում՝ 24.02.1994 թվականին:

² Միջազգային առևտրային արբիտրաժի իրավական բնույթի հիմնախնդիրներին նվիրված են ինչպես հատուկ աշխատանքներ, այնպես էլ արբիտրաժի համալիր հետազոտման մի շարք գիտնականների (Ануров В.Н., Ануфриева Л.П., Брунцева Е.Б., Дмитриева Г.К., Кейлин А.Д., Лебедев Л.А., Лунц Л.А., Федосеева Г.Ю. и др.) աշխատությունները:

³ Stern Peter: Legal institutions, 1998, էջ 18:

⁴ Stern Зом. П. Институты римского права, Сергиев-Посад, 1916, С. 121-122.

⁵ Иеринг Р. Дух римского права СПД, 1875, С. 92.

⁶ Далее по тексту для удобства восприятия термин “альтернативное разрешение споров”, который в международной практике имеет английское название Alternative Dispute Resolution, будет часто заменяться его английской аббревиатурой, используемой в литературе наиболее часто-ADR.

⁷ Մինի գործընթացները ներկայում դարձել են միջազգային տնտեսական վեճերի լուծման առավել հայտնի մեթոդներ, այդ թվում՝ պետությունների և պետական կազմակերպությունների մասնակցությամբ վեճերի կարգավորման բնագավառում, որին կանդիդատանք առանձին հոդվածով (այն նույնպես դիտվում է որպես վեճերի լուծման արտադատական մեթոդ):

⁸ Տե՛ս Ануфриева Л.П. Международное частное право: в 3-х томах. Том.3. Учебник.-М. “БЕК”, 2001, С. 70; Брунцева Е.В. Указ. Соч. С. 20.

⁹ Տե՛ս О центре при ВОИС: Брунцева Е.В. Указ. соч. С. 22-23.

Армине Чобаян

Аспирант кафедры гражданского процессуального права

Европейской региональной академии (ERA)

Член палаты адвокатов РА

РЕЗЮМЕ

Сравнительная характеристика международного коммерческого арбитража и посредничества (Научный анализ)

В статье проведен сравнительный анализ о сходстве и различии медиации и арбитража, и конечно, приведены обязательные и необязательные условия при применении решений медиации и арбитража.

Ключевые слова: мировая глобализация, торгово-экономические отношения, государственные механизмы, международные обязательства, арбитражное законодательство, международный коммерческий арбитраж, национальный суд.

Armine Chobanyan

PHD student of European Regional Academy (ERA)

Department of Civil procedural law

Member of chamber of advocates of Armenia

SUMMARY

Comparative characteristics of international commercial arbitration and mediation (Scientific analysis)

The article provides a comparative analysis of the similarities and differences between mediation and arbitration. It is also presented the fact of the decisions made by arbitration and mediation to be mandatory or non-obligatory.

Keywords: world globalization, trade and economic relations, state mechanisms, international obligations, arbitration legislation, International commercial arbitration, the national court.